Դաս 1. Ես իմ փոքր հայրենիքում

Արմենիա, նկարիչ՝ Մերուժան Խաչատրյան

Ասույթներ հայրենիքի մասին

✓ Կա մի ուրիշ մարմին, որ ավելի ու ավելի պաշտելի է, քան մեր սեփականը: Այդ մարմինը Հայրենիքն է:

Մուրացան

✓ Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք:

Գարեգին Նժդեհ

✓ Երկրագնդի երեսին չկա այլ երկիր, որն այսքան հագեցած լինի հրաշքներով, ինչպես հայերի երկիրն է:

Ջորջ Բայրոն

✓ Հայաստանը գիրք է, որով սովորել են առաջին մարդիկ:

Օսիպ Մանդելշտամ

✓ Հողը մի կենդանի էակ է, նա ունի իր հոգին, և առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի՝ մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին:

Մարտիրոս Սարյան